

ՔԱՐՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՆԴԻՍ

ԲԵՐՈՅԵԿԸՆ, ԲՆԵԿԸՆ, ԲԵՆԵՍԻՐԵԿԸՆ ԵՒ ԵՌԵՒՏԵԿԸՆ

ԳԻՏԵԼԵՅ

ՇՐՋԱՆ ՎԵՅԱՄՍԵԱՅ.

ՇԱՐԼԳԻՐՔ.

ԳՐ. Պ. ՊԱՐՏԻՉՊԱՆԵԱՆ Տ. ԳԱՐԱԳԱՅԵԱՆ.

Ա. ՏԱՐԻ. Ա. ՇՐՋԱՆ

1862

ԹԻԻ 2. ՓԵՏՐՎԱՐ 20

Հրատարակի ամիսը երկու շաբաթ.
Վեցամսեայ գինն է՝ 8 ֆրանկ.
Իջմիրէն դուրս ծածրու ծախքը ամսուցին վրայ է.
Ստորագրութիւնները չըջանին քիչերէն կըսկսին.

Հանդէսիս քերթերեալոր եւ իցե նամակ եւ գրութիւն
անօրէնին դիտի ուշցուի.
Ստորագրութեան տեղերն են.
Իջմիր՝ վազուրական Թանգարանից Հաշտիկոցոց, Թիւ 25
եւ Տաղիկի գրասենեակից, կիրիթ Խան, Թիւ 3.

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Ազգի մը յառաջագիմութեան հիմունքը
բարոյական, մտաւորական եւ բնական կըր.
Թուիւններն են.

Ամեն յառաջագիմ՝ և լուսաւորեալ Ազգի
բարոյական, մտաւորական և բնական կրթութեանց
մէջ զարգացած են ըստ բաւականի:

Այս երեք տեսակ կրթութեանց միջոցներով
կարող է Ազգ մի յառաջագիմութեան ասպարէզին
մէջ մտնել, ասոնցմով կրնայ Ազգութիւնը կու
րուսընող ժողովուրդ մի՝ նորէն զայն ստանալ և
Ազգութեանց՝ անմահ յիշատակարանին մէջ պատ
ուոյ տեղի ունենալ:

Այս: Ազգի մը յառաջագիմութիւնը՝ բարուց

ուղղութեան, մտաց լուսաւորութեան, նիւթական
վիճակին բարելաւութեան և մարմնամարդական
կրթութեանց վրայ կը կայանայ: Բայց սակայն
դժուարութիւնը այս երեք մասերուն բարեկարգ և
վայելուչ կերպով զօրծաղրուելուն վրայ է:

Այս տեսակներ թէ ինչ է բարուց ուղղութիւն
կամ բարոյական դաստիարակութիւն ըսուածը:

Բարոյականութեան հիմը բնական և աստուա
ծային օրէնքն է և խիղճը, բարոյականութիւնը
մարդկային յօժարութիւնները չափու և սահմանի
մէջ կը դնէ, համեմատութիւն կ'ուսուցանէ, մար
դասիրութիւն, հետեւաբար ազգասիրութիւն ու
հայրենասիրութիւն դաս կ'ուտայ:

Աստուածային և բնական օրէնք չճանաչող և
անխիղճ մարդուն անհնար է որ բարի վարք, հա
մեստութիւն, մարդասիրութիւն և ազգասիրութիւն
ունենայ, չկրնար անիկայ իւր կրքերը սանձահարել

և զանոնք կարգի դնել:

Անօրէնք՝ իւր կրքերէն զատ ուրիշ կանոն չունի, իւր յօժարութիւններէն զատ ուրիշ օրէնք չճանչեր, իշխանութեան երկիւղէն զատ ուրիշ սանձ չգիտէր, անձնապաշտ է, իրմէ զատ ուրիշ Աստուծոյ չհաւատար:

Այսպիսի մարդը ամեն տեսակ դիմակ կը հագնի և բնաւ անկեղծութիւն չունենար, երբէք չկրնար կատարելապէս հաճեալ լիցուիլ: Անիկի՞ և անօրէն մարդը կ'ըլլայ փոփոխամիտ, խաբախ, ինքնամոլ, անդուծ և շահախնդիր, ի վնաս հանրութեան անձնական շահը և օգուտը կը փնտէր: Իսկ ուղիղ բարք ունեցող մարդը միշտ խղճի, բնութեան և աստուածային օրինաց կը հպատակի:

Մտային լուսաւորութեան կամ մտաւորական կրթութեան մէջ կը պարունակին՝ ճշմարիտ լուսաւորութեան օրէնքն ու պայմանները: Մոօք լուսաւորեալ է այն անհատը՝ որ ուսմանց և դիմուծեանց վրայ կատարեալ և ուղիղ դադափարներ և ճիշդ տեղեկութիւններ ունի: Տնտեսական կրթութեամբ՝ որ մտաւորականին մէջ մասն է, դիրակեցութեան և խնայելութեան ճամբան գտնելու և չքաւորութեան ու կարօտութեան առաջն առնելու միջոցներուն գիտութիւնը կ'ուսանինք:

Բնական կրթութիւնը՝ մեր մարմինը զօրացընելու, մեր կեանքը երկար և երջանիկ օրերով անցընելու և մեր առողջութիւնը ապահով պահելու միջոցները կը սովորեցնէ:

Բարոյական կրթութիւնը՝ կամ դաստիարակութիւնը մայրական սիրոյն յանձնուիլ պէտք է (1) • մտաւորական կրթութիւնը վարժապետաց դործն է, և իւր նպատակն է միտքը բեղմնաւորել տեսակ տեսակ դիմութիւններով ու ծանօթութիւններով, ինչպէս որ բարոյական կրթութեան նպատակն է հոգին զօրացընել և զայն մեր կենաց դործողութիւններուն դատողութեանցը հրաւիրել՝ բնականինն է մարմինը կազդուրել և զօրացընել:

Այս երեք տեսակ կրթութիւններէն կը ծագի կատարեալ մարդը, կ'ըսէ Լյուքս-Մարթէն, եթէ ուղիղ համեմատութեամբ աղէկ և վայելուչ կերպով դործագրուին ու հաստատուին:

Դարձնենք տեսութիւննիս անգամ մի մեր Ազգին վրայ, թէ արդեօք վերոյիշեալ կրթութիւններն ըստ բաւականի տարածուած են իւր մէջ:

Ուրախ սրախ կը տեսնենք ու կը լսենք որ օր

աւուր այս կրթութեանց անհրաժեշտ ըլլալուն և օգտակարութեան ծանօթութիւնը կը տարածուի Ազգերնու մէջ: Ար փափաքինք որ այս կրթութեանց դործողութեանը հոգ տանողներն ևս բազմանան, որով և աղայոց, մանաւանդ աղջկանց կրթութեան և հմտութեան համար շնորհաւ բարեկարգ դպրոցները և վարժարանները, ազգասիրական հաստատութիւնները, աղօղուտ հանդէսները, օգտակար դրքերը և բարենպաստ ու մարդասիրական ընկերութիւնները շատնան բարեկարգ և խելացի անօրէնութեանց ներքէ:

Ազգի մը մէջ ճիշդի սակաւութիւն ըլլան աղօղուտ հիմնարկութիւնները և հանդէսները, այնչափ քիչ կ'ըլլան նոյն աղջկն մէջ՝ աղօղային օգուտը ճշմարտապէս ճանչցող ճշմարիտ հայրենասէրները:

Ազգ մը այն ժամանակ յառաջ կը գլիմէ դէսդ ի լուսաւորութիւն, երբ բոլոր իւր անհատներէն՝ ոմանք իրենց քրտինքն ու աշխատութիւնը, ոմանք իրենց անձնական շահն ու օգուտը, ոմանք իրենց աչաց լոյսը և ոմանք իրենց սրտագուղի դրամական նպատակները և քաջալերութիւնները՝ սիրով և յօժարութեամբ նուիրեն և չխնայեն զանոնք յօգուտ և ի բարեւալութիւն Ազգին և Հայրենեաց և ի բարի դաստիարակութիւն ապագայ սերունդին:

Այլ յուսանք որ աղօղային ազատարար Սահմանագրութիւնը՝ ընդհանուր ազգը հին և անկարգ դրութեանէն ազատելով՝ նոր և լուսաւոր դրութեան մէջ պիտի դնէ և մեծապէս հոգ պիտի ունենայ ճշմարիտ և հիմնական դաստիարակութիւնը հաստատելու ամեն դպրատանց մէջ, որմէ զուրկ ենք այժմ:

Ո՛րչափ ցաւալի և սոսկալի է այն աղջկն վեճակը, որն որ Սահմանագրութիւն, օրէնք, կարգ, կանոն չունենայ, և մանաւոր անձան յօժարութեանց և խորամանկութեանց ենթակայ ըլլայ

Գ. Պ

ՀԱՄԱՐՈՏ

ԲԱՆԱԿԱՅԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆ ԿԵՍ՝ ՄԶԳԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆ

ՅԱՌԱՅԱՐԵՆ

Քաղաքավարութիւնը մտաց շնորհքն ու վաշխելութիւնը, բարեսրտութեան սիրուն ու շնոր-

(1) Դժբաղդարար ճշմարիտ և հիմնական դաստիարակութիւն առած մայրեր չունենալու՝ առ այժմ նոյն պոչոտնը պատուէի վարժապետաց կամ դաստիարակաց վրայ է:

Առաջին անգամ ժողովուրդը առեն տերեւները խիստ կակուղ կ'ըլլան, ասոր համար է որ ոռոգ ու կայտերակն ինչ կամ ինչի ծառիկ կը կոչուին:

Բայց այս ինչի ծառիկ ըստածը խիստ քիչ անգամ Լւարոպա կը բերուի: Այս ինչի ծառիկ անուամբ ընդունածնիս հասարակօրէն երկրորդ անգամ ժողովուրդն է:

Թէպէտ 16-րդ դարէն ի վեր Լւարոպոյ մէջ ճանչցուած է և Հոլանտացիք եղան առաջինը՝ որ մեզի հաղորդեցին զայն: Իւր արժէքին համաձայն տեսակ տեսակ անուններ ունի թէպէտ: Գլխաւոր երկու տեսակները՝ կանաչ ու պարզ ըստած թէյերն են: Կ'ըսեն թէ զինքն մէջ գտնուած շոգիները կը ցրուէ, և յիշողութիւնը կը զօրացնէ:

Տ. Գ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՅՆ

ՄԱՐԴՈՒՄ ԶՈՐՍ ՏԱՐԻՔԸ

ՏԵՍԱՐԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ

Ա. — Մանկութիւն եւ դատանեկութիւն:

Մտքով տուն մի մանէնք, ուր տեղ աղայութեան զուարթութիւնները ծաղկին, այն տեղ սիրին մտածումները և երեւոյթութիւնները և այն տեղ վերջանան:

Երբոր տղան տանը մէջն է, տարիներու ընթացքին թող տրուած՝ որոնք զանի յառաջ կը վարեն, ինչպէս նաւաստի մը իւր խաղաղ նաւահանդիստին մէջ, և կամայ կամայ զանի կենաց Ովկիանը կառաջնորդեն, չգիտեր թէ որչափ քաղցր հաճութիւններ և գորովախառն սէրեր հետ զհետէ իւր էութենէն կը հեռանան և կանհետանան անողորմ անցեալին մէջ, ուր մարդ մի միայն իւր երեւակայութեամբը կարող է թափանցել: Չգիտեր ան այսպէս ըլլալը. և օրհնեալ ըլլայ Աստուած որ այս խորհուրդը իւր մտողաշ զլին մէջ բնաւ չմանէ՝ երբոր իւր մօրը՝ զգիպքը մէջ կը հանդիպէ, աչքերը անոր վրայ տնկած, երբոր անորմէ խաղալու հրաման կուգէ, և կամ երբոր իւր մեծ տրամութիւններէն մին կը պատմէ անոր:

Չգիտեր թէ՝ օր մի պիտի չկարենայ գտնել իւր ցաւերուն մասնակցութիւն մի և իւր բաղձանայ համակրութիւն մի ինչպէս հիմայ:

Չմտածեր թէ իւր պզտիկ քոյրը Տիգրանու

հին (1), որ միշտ իւր ամեն զգացումներուն մասնակցից կըլլար, ժամանակ անցնելէ ետք իրմէ պիտի բաժնուի դուցէ:

Բայց հիմայ երկուքն ալ իրենց սիրական տանը մէջ կը գտնուին: Կրակարանին քոյրը տնական ցանկին որմերը կը լուսաւորէ, նման այն նուիրական կրակին՝ որուն ճառագայթները Վեստեան կուսանաց դիմաց վրայ կը ցլտանային, նման Լեբրայական ողջակիզաց փայտակոյտին՝ որոնց շոգին դէպ ի երկինք կը բարձրանար: Իրենց հայրը, կրակարանին մէկ անկիւնը, իւր լայն աթոռին վրայ նստած է՝ իւր աւեղարդ գլուխը կաշնիէ յենարանի մը վրայ կըթնած: Փոքրիկ Տիգրանուհին իւր ծնդացը վրայ է, և անոր պարզ հարցումներ ընելով՝ իւր նայուածքովը անորմէ պատասխան կը խնդրէ: Անոր դիմացի կողմը նստած է ընտանեաց բարի մայրը, նիւհար դէմքով, զուարթ կերպարանքով, բայց սակայն բնութեանը վրայ համակամութիւն մի գրոշմուած: Իւր ձեռքը որդւոյն ուսին վրայ դրած՝ անոր անպաշտօն համար խանդաղատանօք մէկ քանի իմաստուն խրատներ կուտայ:

Կատուն ուսերը ուռնցիւցած՝ վառարանին քով կը նիւհէ: Պատի ժամացոյցը, որ անշարժ տխրութեամբ կը հնչէր երբ Զարեհ մեռաւ, հիմայ իւր կանոնաւոր երեքու մը յառաջ կը վարէ: Սենեկին մէջ տեղը մեծ սեղան մի կը գտնուի, ուրուն վրայ դրուած են գրքեր, նկարներ և օթոցներ (Խաբէրի): Կանթեղը վառուածին պէս, ամեն մարդ գործի կըսկսի:

Հայելին տակը՝ կրակարանին այրուած փայտերուն լուսովը լուսաւորուած կը տեսնուէր, Աստուածաշունչը մեծահաստոր, այն մեծարոյ Գիւրքը, որն որ արծաթէ ճարամանդներով պահպանուած էր: Տղայքը շատ անգամ կը խնդրէին որ զայն բանան, որպէս զի անոր մէջին հիւսիսայն պատկերները և Հին ու Կոր Կրակարաններուն մէջ տեղի թողութիւնը տեսնեն, այն նշանաւոր թղթերը, որոնց մէջ արձանադրուած էր ընտանեաց պատմութեան դէպքերը:

Մէկ կողմ ծնունդները կային. հօր և մօր ծնունդները խիստ հեռաւորութեամբ դրուած կեանքէն: Միւս կողմը ամուսնութիւնք, անոնցմէ ետք մեռեալները: Մինչև յայժմ մի միայն մէկ մեռեալ ունեցած են, այն է թշուառ Զարեհն. «12 սեպտեմբեր 18... Զարեհ Լեռնանդեան, ի հասակի չորից ամաց»: Տղայքը շատ աղէկ կը ճանչնային

(1) Աւելի յարմար գտնեցինք հայկական անուններ գտնել, փոխանակ բնագրին մէջ օտարադիր անուններուն:

ծախուեցան, և զրեթէ ամէն բէաւօ զիտցող ունի զայն և կը չալէ: Արդ կը հարցընեմ թէ՛ եթէ աւանի երգին յատուկ հինգ զծեայ մը սահմանէր և բէաւօյին ցամաք առօթանէր՝ մը տար, ո՞վ կը գընէր արդեօք զայն և ո՞վ կը չալէր. պարսպ տեղը: Սասեաց Լ՛ղանիի ժամանակաւ հրատարակած աղփային երգերէն, որոնք յատուկ հինգ զծեայներ կը կրեն մարդու երգի ընկերակցութեան համար, մինչև հիմայ բէաւօյի հետ միատեղ երգող մը չի ըսեցինք ամենեւին:

Բ. Յարգի Պ. Կոստանդեանին երկրորդ դիտողութեան զալով՝ Հայերը գեռ նոր կը սովորին և կը հնչեն աօթաւօ առօլ-իօ, Լէնօրէ, պարթի-իօ և այլն բառերը, և (ուր պիտի դիտանա և հասկնան Կոլարտի յայտերուն պարթի-ի-աները), այն բառերէն իւրաքանչիւրին երգելու համար պահանջած կանոնները և սկզբունքները, Լէնօրի ձայնին մինչև ո՛ւր բարձրանալը, պարթի-իօյին մինչև ո՛ւր իջնալը: Ուստի դարձեալ ամէն մէկ երգի սկիզբ այն բառերէն մէկուն նշանակութիւնն ըստ իմ կարծեաց բան մը պիտի չկարենային հասկնալ: Անկէց զատ, եթէ չեմ սխալիր, որ և իցէ հասարակ նուազի մը այս անպատճառ հարկ չէ նշանակուիլ: Հաւանական է որ, ինչպէս կը կարծեմ, օբեկաներու և ուրիշ բարձր գրուածներու համար աւելի անհրաժեշտ ըլլայ:

Վ. Երջապէս հիմակուհի մայ այս և ասոնց նըման բաներու “ թոյլութիւնն ընել հարկ է ”: Այս է սղարգաբար իմ ալ կարծիքս:

Սեր արժանայարգ բարեկամին ըրած նկատմունքներուն վրայ իմ մտանաւոր դիտողութիւններս ըրի անկեղծութեամբ: Կարելի է որ սխալած ըլլամ ենթադրութեանցս մէջ, ուստի համոզուելէ վերջ պտտրաստ եմ անմիջապէս ըսածներս ետ առնուլ հրապարակաւ: Սա ալ ինձ պարտք կը համարեմ զուրցել որ իմ դիտաւորութիւնս յարգի Պ. Կոստանդեանին երաժշտական արժանիքը կտարել չէ. և ինչպէս կրնայ ըլլալ այն՝ երբ իր ըրած նըկատմունքներուն խիստ օրինաւոր և երաժշտական օրինաց համաձայն ըլլալը խոստովանեցայ և կը խոստովանեմ: Իմ միտքս՝ միայն իմ տկար զաղափարս յայտնել է թէ իր ըրած այն նկատմունքները հիմակուհի մայ մերազնեաց յարմար չեն, և անոնց համար կարևորութիւն չեն կրնար ունենալ:

Վ. Երստին թողութիւն կը խնդրեմ իմ պատուական բարեկամս և աներկիւմ եմ որ ինչպէս յառաջ խօսեցայ, ըրած դիտողութեանցս համար չզարիւր բնաւ ինձմէ, բարեմտութեանս վրայ վստահանալով:

Իսկ դուք, Սեծարոյ Տնօրէն, հաճեցէ՛ք կ'աղաչեմ՝ ձեր օգտակար սիւներուն մէջ ամփոփել ներկայ նամակս. և ես մնամ յարգանքով:

Ս. Ն.

ԱՅԼԵՒԱՅԼՔ

Պ Ա Տ Ա Ս Ի Ս Ն Ի

ՀԱՐՅԱՐԵՆ Դ՞ ԵՐԵՍԻՆ

Ա. Ճշմարիտ մեծ մարդ ո՞վ է.

Ա. — “ Ճշմարիտ մեծ մարդը, կըսէ Քանին, միշտ ճշմարտութիւն կը խօսի, և անուաճելի հաստատամտութեամբ իրաւունքը կը գործադրէ և արդարութիւնը կը պաշտպանէ, թէ ներքին և թէ արտաքին՝ փորձութեանց դիմագրելու զօրութիւն ունի, յարատեւութեամբ և համբերութեամբ ամեն դժուարութեանց կը յաղթէ, փոթորիկ ժամանակները հանդարտ է, անխառ մարդուն հալածանքն ու սպառնալիքը առ ոչինչ կը գրէ, և անգաղար իրեն, իւր ընտանեաց ու բարեկամներուն և իրեն հետ յարաբերութիւն ունեցող մարդոց բարոյական լաւութեան և ազնւութեան աշխատելով՝ իւր բոլոր վստահութիւնը իրեն բարոյական հաւատոյն, առաքինութեան և Աստուծոյ վրայ կը դնէ ”:

Բանաւորութեան և կրից մէջ եղած պատեւրազմները, բարոյական սկզբունքներու ձեռնտուութեամբ՝ անձնական շահուն ստիպողական և դեթէ անդիմադրելի ձայնին վրայ տարուած յաղթութիւնները, պարտաւորութիւնը ճշդիւ կատարելու համար դառն զոհողութիւնները, բարոյական յառաջդիմութիւն մի, ընդհանուր կամ ազգային բարիք մի կամ թէ անձնանուիրութեան վեհ զօրծ մի տեսնուածին պէս՝ զօրաւոր փափաքներու և ամենասիրելի յոյսերու երեսի վրայ թողուլը, ահա ասոնք են Բեժ. Գոթթէր, և այս բարեմասնութիւնները ունեցող անհատը՝ կըսուի Բեժ. Դարդ:

Այն հայերը և մայրերը՝ որոնք իրենց աղքատիկ տանը մէջ, իրենց զաւակաց ճշմարիտ դաստիարակութեան սկզբունքները կը սովորեցընեն, անոնց մտաց և սրտին մէջ բարւոյն և դեղեցկին ըզգացումը և սէրը կարթնցընեն, անոնց ներսի դին ամեն փորձութեանց համբերելու կարողութիւն և կամք կը յարուցանեն, և կենաց պատեւրազմներէն

Լ. Պօրն 2 պալեայ մատաքս. — Քուզինիէ-
րի և որդի 2 պ. նոյնէն, 35 պ. բոժոժ (զօշա).
— Օթթօման պանդա, 94 պ. նոյնէն. — Բօտի-
թի եղբարք 10 պ. նոյնէն. — Ժէլինկաուս և
Օիկմէր 5 պ. նոյնէն. — Վ. Լասթրաքի 36 պ.
նոյնէն. — Ժ. Մարչէլա 11 պ. նապաստակի
մորթ. — Բութիէ Լ. Մայնէթի 15 տուպրակ խէժ.
7 տոպ. գետոր. — Քրամէր և ընկ. 1 սնտուկ
Լփիոն. — Տէտէեան, Կուպար և ընկ. 1 պ. նա-
պաստակի մորթ. — Հ. Մ. փափաղեան 3 սնտ.
ծխախոտ :

Փետր. 8. Թրիէսթայէն Իզմիր եկող Լատ.
շոգենաւուն մէջէն ելած չուխայները ու այլև այլ
ապրանքները .

4 պալեայ չուխայ . Խ. Լազարեանին. — 7
պ. նոյնէն. Կ. Բրուսիլինաիին. — 2 պ. նոյնէն
Խ. Լէրիզեան. — 4 պ. նոյնէն Ժ. Լմբո-
յին. — 4 պ. նոյնէն Ժ. Շիֆմէնին. — բամպա-
կէնէն Ս. Ղ. զնճաեանին. — 1 ս. մանր մունը և աե-
սակ տեսակ ապրանք 3. Մարկոսեանին, 3 սնտուկ :

Փետր. 10. Մարսիլիա մեկնող Փօլէէ
ընկերութեան Լ. Սէն անուն Գաղղ. շոգենաւուն
մէջի այլև այլ ապրանքները .

3. Վարպետեան 203 տուպրակ սև չամիչ. —
Ս. Մուրատեան 625 տոպ. նոյնէն. — Բաճի Լ.
Պարի 690 տոպ. նոյնէն. — Քուզինիէրի և որդի
190 տոպ. խաշտաշի հունտ. — Ժէլինկաուս Լ.
Օիկմէր 79 պ. նոյնէն. — Ժ. Մարչէլա 20 պ.
նոյնէն. — Լ. Տիմիթրաքօբուլօ 22 պ. նոյնէն. —
Ժ. Պ. Իսսալէբաէնա 114 պ. նոյնէն. — Ս.
Մարտօս 12 պ. նոյնէն. Բ. Տանօն 26 պ. նոյ-
նէն. — Կ. Լազարաքի 20 պ. նոյնէն. — Լ. Կոնտ-
րան և ընկ. 29 պ. նոյնէն. — Օթթօման պանդա
25 պ. նոյնէն. — Բէճճիօ Լ. Քօրսի 53 պ. նոյ-
նէն. — Պ. Քրասիմաթի 36 պ. նոյնէն. — Տ. Լ-
մբօ և ընկ. 322 պ. նոյնէն :

Փետր. 10 ին Թրիէսթ մեկնող Լ. Բէր-Լիէ
անուն Լատ. շոգենաւուն մէջ բեռնաւորուած
ապրանքները :

60 պալեայ մորթ : 3 սնտուկ ափիոն . 93 պ.
բամպակ : 44 տոպ. վայրի կաղին : 22 տակառ չա-
փի : 1 պ. թիֆթիք : 7 տակ. տղրուկ (սիւլիւք) :

Յունուար 22 ին Լ. օնտրայէն Բալէաի անուն
Լնդղ. սքրու շոգենաւը ելեր է շիտակ Իզմիր դա-
լու :

Յունվ. 22 ին Լ. իվրբուէն Քօրէնիլէն անուն
Լնդղ. սքրու շոգենաւը ելեր է շիտակ Իզմիր
դալու :

Նմանապէս Լ. իվրբուէն Լ. Լաւ անուն Լնդղ.
սքրու շոգենաւը ելեր է շիտակ Իզմիր դալու :

Յունվ. 20 ին Լ. Լա անուն Լնդղ. սքրու շո-
գենաւը Լ. օնտօն հասեր է :

Լյա Սօֆիա անուն Լնդղ. սքրու շոգենաւը
անցածները Լ. իվրբուլ մեկնեցաւ :

Լմսոյս 12 ին Պօլիսէն Վէլէիլէն անուն
Լնդղ. սքրու շոգենաւը Հաթթէսոն Մէրիէս և
ընկերութեան հրամանին հասած է Իզմիր :

Փետր. 7 ին Լ. Բէլիա անուն Լմբիկայի նաւը
Իզմիրէն Պօլիս մեկնեցաւ :

Փետր. 7 ին Լ. Կալիա անուն Իզմիրէն
Պօսթոն մեկնող Լմբ. նաւուն մէջ բեռնաւորուած
ապրանքները :

Բուրգ, պալեայ 568. — Բամպակ պ. 225. —
Թուղ, սնտուկ 12. — խէժ, սնտ. 8. — սպունդ,
սնտ. 2 :

Փետր. 5 էն մինչև 20 այլև այլ գլխաւոր
ապրանաց ծախքերը և որքանութիւնը :

Վայրի կաղին. (Էլաճոֆ) չուխային մէջ պատ-
րաստ ապրանք քիչ կայ, որովհետև դուրսերէն բեր-
ւիլը շատ դժուար կ'ըլլայ կոր, թէպէտև այն դուրս
դանուած շատ ապրանքներէն իսկ բաւական ծախ-
ուեցան հոս : 15 օրուան միջոցին մէջ ծախուածը
1500) կենդինարէն աւելի է : Գինը 77—83 :

Բամպակ : Մեր վերջին յաւելուածը երեւելն
ի վեր 700 պալեայի չափ ծախուեցաւ : Բրքաղա-
ճի տեսակէն գին 408—430 դուրուշ կենդինարը .
բայց այսօտուան գինը 45) դըշ է : Գասապայինը
415—420 : Սուպուճայինը 460—480 : Պատրաստ
ապրանք խիստ քիչ, բայց ուղղ շատ կայ :

Տորոն (Էօս պոյա). 15 օրուանէ ի վեր շա-
րունակ կը ծախուի : 1500 պալեայի չափ ծախուե-
ցաւ : Պախըրի տեսակէն 243—253 : Գայաճըրի-
նը 233 : Պատրաստ 10000 պալեայի չափ կը դըւ-
նուի :

Տ. Գ.
Լփիոն, խաղաղ է, և գինը 180 :

ՏՆՕՐԼՆ
ԳՐ. Պ. ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ

Զ Մ Ի Ի Ռ Ն Ի Է
Ի ՏՊԱՐԱՆԻ ՏԵՏԷԼԱՆ